ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 66 30 .03. 2020թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Ղուկասյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ավագանու N05-Ա, 06-Ա և07-Ա որոշումները:
Առդիր 3. էջ:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2020թ. N 05-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով՝

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1.Քարաձոր համայնքի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել երեք և հանձնաժողովների անհատական կազմերում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին՝

1) Կարապետյան Արսեն Աղասու
2) Պետրոսյան Իշխան Սաշայի
3) Կարապետյան Վահրամ Շարամբեկի

2. Ուժը կորցրած ճանաչել Քարաձոր համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 16-ի «Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 09 -Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
		-	-
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ.Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2020թ. N 06-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալական անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝
   1.Հրանուշ Ռոստոմյան- համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ
   2.Հայաստան Սահակյան – համայնքապետարանիաշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար
   3.Իշխան Պետրոսյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
   4.Արսեն Ս. Կարապետյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
   5. Սուրիկ Սարգսյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
   6. Անուշ Մատինյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար Հ.Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մարտի 2020թ. N 07-Ա

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72 -րդ հոդվածով.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Քարաձոր համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով
   1.Հրանուշ Ռոստոմյան- համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ
   2.Հայաստան Սահակյան – համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, խորհրդի քարտուղար
   3.Իշխան Պետրոսյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
   4.Մասիս Հովակիմյան -հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
   5. Զարգանդ Բարսեղյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
   6. Արմեն Սարգսյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
2. Խորհրդի գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2014թ նոյեմբերի 14-ի «Քարաձոր համայնքի ղեկավարին կից, Քարաձոր համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները , ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N14-Ն որոշմամբ հաստատված կարգով:
3. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2014թ նոյեմբերի 14-ի «Քարաձոր համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին» N 15-Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար Հ.Ռոստոմյան